

## ՄԱՏԹԵՈՍ ՄԱՍՈՒՐԵԱՆԸ ԵՒ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ (1830-1901)

Մատթէոս Մամուրեանը 19-րդ դարի երկրորդ կէսի ժողովրդավարական մանկավարժութեան այն երախտաւորներից է, որը դպրոցի եւ մանկավարժական մտքի հիմնահարցերին մօտեցել է ծաւալուն մեկնաբանութիւններով: Հարուստ է Մամուրեանի թողած ժառանգութիւնը՝ բազմաժամանակակից բնագաւառները՝ մանկավարժութիւն, հրապարակախօսութիւն, լեզուաբանութիւն, պատմագիտութիւն, թատերագիտութիւն, հայկաբանութիւն, բանասիրութիւն, թարգմանչութիւն, տնտեսագիտութիւն, հրատարակչութիւն: Երեսուն տարի շարունակ (1871-1901) նա խմբագրել է «Արեւելեան մամուլ»-ը, որտեղ լոյս են տեսել մանկավարժական, տնտեսագիտական, քաղաքական, պատմագիտական եւ գեղարուեստական բնոյթի բազմաթիւ յօդուածներ: Մամուրեանն աշխատակցել է նաև «Ծաղիկ», «Մեղու», «Կիլիկիա», «Կոռւնկ Հայոց աշխարհին», «Միութիւն», «Մասիս» եւ այլ պարբերականներին՝ հանդէս գալով Վրոյր, Շահնուր, Ապրսամ եւ այլ ծածկանուններով, տպագրել բազմաքանակ յօդուածներ:

Մ. Մամուրեանը գաղափարական առնչութիւններ է ունեցել Միքայէլ Նալբանդեանի, Յովսէփ Շիշմանեանի (Ծերենց), Յարութիւն Սուլաճեանի, Յակոբ Պարոնեանի, Գրիգոր Զիլինկիրեանի, Արմէնակ Հայկունու, Կարապետ Փանոսեանի եւ այլոց հետ, ովքեր ըստ արժանուոյն են գնահատել նրա գիտական գործունէութիւնը եւ գրական հարուստ ժառանգութիւնը: Հայ պարբերական մամուլի հջերում Մամուրեանի թէ՛ կենդանութեան ժամանակ եւ թէ՛ նրա մահից յետոյ տպագրուել են տասնեակ յօդուածներ՝ նուիրուած վաստակաշատ գրագէտի կեանքին ու գործունէութեանը, որոնց մէջ Մամուրեանը ստացել է ճշմարիտ եւ անաչառ գնահատանքներ:

**Ոէթէոս Պէրպէրեանը Մամուրեանի գիտամանկավարժական բեղմնաւոր գործունէութիւնը բնութագրել է այսպէս՝ «... Նա քառորդ դարից աւելի գրիչ կը շարժէ՝ բրելու համար հայ իմացականութեանց խոպան դաշտերին, հայ ընկերութեան հիւանդ մարմինն զննելու իւր խորատես բիբերով, մատնանիշ ընելու վերքերն ու դարմաններն ցոյց տալու, անդուլ ու անխոնց քանդելու նախապաշարումներն, հարուածելու ազգակուլ մոլութիւններն ու ախտերն, վերաշիննելու տունն ու դպրոցն»<sup>1</sup>: Իսկ Տէմիրճիպաշեանը, որն իր գնահատանքների ու արժեւորումների մէջ չափաւոր, զուսպ ու խիստ ընտրողական էր, Մ. Մամուրեանի մասին անթաքոյց հպարտութեամբ գրում է. «Այս՝ կրնանք հայ Կէօթէ<sup>2</sup> մանուանել մեր զգայուն, եւ խոհուն, եւ ներիուն Մամուրեանն, որ անձկագոյն շրջանակի մէջ այնքան տիեզերական է որքան Թառւսդի հեղինակն: Գրականութիւն, քերրութիւն, իմաստասիրութիւն բնաւ անմատոյց չեն Արեւելեամ մամիզյ (ընդգծումները՝ բնագրային) մեծ իմաստ խմբագրապետին: Եւ մեր ազգին մէջ նորադէպ, իսկ Նւրոպական ազգաց մէջ հազուադէպ երեւոյք մ'է թէ, գրագէտ մ'անանձին խմբագրէ քաղաքական, գրական եւ իմաստասիրական հանդէս մ'ուր քաջուասումն անձինք իսկ ուսանելի բան կրնան գտնել դեռ»<sup>3</sup>:**

Ունենալով բանասիրական-քաղաքագիտական հիմնարար գիտելիքներ եւ հրաշալի տիրապետելով Փրանսերէն, անգլերէն լեզուները՝ տարիների մեղուածան աշխատանքով յայտնի է դարձել իբրեւ գեղարուեստական ու գիտական գրականութեան թարգմանիչ, հրապարակել է բազմաթիւ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, աւելի քան 50 տարի մանկավարժական աշխատանք է վարել կ. Պոլսի եւ Զմիւռնիայի դպրոցներում եւ յայտնի դարձել իբրեւ մշակութային եւ հասարակական գործիչ: Նա իր մէջ խտացրել է գիտնականի եւ ուսուցչի առինքնող կերպարը հարըստացնող այնպիսի գծեր, որոնք իւրայատուկ են եղել միայն Մուրադ-Ռափայէլեան վարժարանի սաներին եւ ազդին անմնացորդ ծա-

<sup>1</sup> Ո. ՊէրՊէրեան, Մարդիկ եւ իրք, Կ. Պոլիս, 1885, էջ 172.

<sup>2</sup> Մէջերուած հատուածների ուղղագրութիւնն ու կէտաղրութիւնը թողնում ենք անփոփոխ:

<sup>3</sup> Ե. ՏէՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ (Ա. Ազատախոհեան), փիլիտոփայական բառարան ժողովրդական, (փորձ), Կ. Պոլիս, 1880, էջ 20:

ռայելու իր առաքելութեամբ ձգտել է իր հաստատուն տեղը գրաւել Մխիթարեան միաբանութեան մեծերի ոսկեայ փաղանգում:

Մանկավարժական գործունէութեան հետ մէկտեղ Մ. Մամուրեանը ծաւալել է հրապարակախօսական եւ հրատարակչական լայն գործունէութիւն: 1883 թուականին նա հիմնեց իր սեփական տպարանը, ուր տեղափոխեց «Արեւելեան մամուլ»-ի տպագրութիւնը<sup>4</sup>: Հանդէսի շուրջ համախմբուեց ժամանակի հայ գիտական մտքի լաւագոյն ընտրանին՝ Գրիգոր Զիլինկիրեան, Գրիգոր Մսերեան, Գարեգին Սրուանձտեան, Յովսէփ Շիշմանեան, Սրբուհի Տիրոսար (Վահանեան), Յովհաննէս Իփեքճեան, Նիկողայոս Տէր-Յարութիւնեան (Հարոյ) եւ ուրիշներ:

Ամսագիրը բաղկացած էր երեք բաժիններից՝ ազգային, որտեղ տպագրում էին Արեւմտեան Հայստանում եւ գաղթօջախներում ապրող Հայութեան սոցիալ-տնտեսական կացութեանը վերաբերող յօդուածներ, թղթակցութիւններ, նամակներ, գրական յօդուածներ եւ այլն, քաղաքական, որտեղ տպագրում էին Մ. Մամուրեանի եւ այլ ազատախոհ մտաւորականների խմբագրականներն ու ծրագրային յօդուածները, թուրքիայում եւ արտասահմանում կատարուող քաղաքական իրադարձութիւնների մեկնաբանութիւնները: Պարբերականի երրորդ կարեւոր բաժինը կըրթութիւնն ու դպրոցն էր, որտեղ հանգամանօրէն լուսաբանում էին արտերկրի, Արեւմտեան Հայստանի, Զմիւռնիայի եւ հայ գաղթօջախների դպրոցների կրթութեան ու լուսաւորութեան հարցերը:

«Արեւելեան մամուլ»-ը ազատախոհ եւ համարձակ յօդուածների համար իր երկարամեայ գործունէութեան ընթացքում օսմանեան վարչակարգի հրամանով բազմիցս անդամ փակուել ու նորից վերաբացուել է:

Հանդէսը մինչեւ 80-ականների վերջերը բուրժուաժողովը դավարական դիրքերից լուսաբանում էր սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական եւ ազգային հրատապ խնդիրներ, սակայն տարիների ընթացքում, երբ քաղաքական յետադիմութիւնը լայն թափով մոլեգնում էր ինչպէս ցարական Ռուսաստանում, այնպէս էլ Օսմանեան թուրքիայում, շատ մտաւորականների եւ պար-

<sup>4</sup> Ազգային գրական եւ քաղաքական հանդէս, հրատարակուել է Զմիւռնիայում (1871-1909) Մ. Մամուրեանի խմբագրութեամբ, նրա մահից յետոյ ամսագիրը խմբագրել է որդին՝ Հրանտ Մամուրեանը:

բերականների նման «Արեւելեան մամուլ»-ը նոյնպէս հետզհետէ կորցնելով իր առաջուայ յեղափոխական, մարտունակ ոգին՝ յայտնուեց ազատախոհութեան դիրքերում։ Մամուրեանը, որ պարբերաբար յիշեցնում էր, թէ «ինչ ոգիով եւ նպատակով որ սկսած էինք Արեւելեան մամուլի իրատարակութիւնը, նոյն ոգիով կը շարունակենք», սակայն իրականում այդպէս չէր։ Թերեւս նա առաջիններից մէկն էր, որ ակնյայտ տեսնում էր իր ամսագրի սըրընթաց վայրէջքը եւ ամէն կերպ աշխատում էր այն կասեցնել։ Այդ նպատակով 1890 թուականին նա մեծ ջանքեր թափեց թերթը կ. Պոլիս տեղափոխելու եւ այն օրաթերթ դարձնելու համար, բայց, ցաւօք, դա նրան այդպէս էլ չցածողուեց։ 1894 թուականից սկսած թերթը դարձաւ կիսամսեայ հանդէս, ուր հիմնականում տպագրում էին խմբագրականներ ու թարգմանութիւններ։ Սրանով հանդերձ, Մ. Մամուրեանի պարբերականը 19-րդ դարի երկրորդ կէսին արեւմտահայ իրականութեան խոշորագոյն երեւոյթներից մէկն էր, քանի որ, փաստորէն, այն կատարում էր ոչ միայն արեւմտահայ ու արեւելահայ, այլեւ Եւրոպայում տեղի ունեցող կարեւոր պատմաքաղաքական իրադարձութիւնների եւ մշակութային կեանքին վերաբերուող խորաթափանց մեկնարանութիւններ՝ միաժամանակ կատարելով նաեւ փաստագրական տեղեկատու հանրագիտարանի դեր։

Հրատարակութեան հէնց առաջին օրերից պարբերականի է-ջերը տրամադրում են լուսաւորութեան, դպրոցի եւ կրթութեան հիմնահարցերի հանդամանալից քննարկմանը։

Առաջին հերթին, հանդէսում ամենայն խորութեամբ լուսաբանուել են Զմիւնիայի Մեսրոպեան եւ Հոփիփսիմեան վարժարանների կրթադաստիարակչական աշխատանքները, քննարկուել կրթութեան բովանդակութիւնը, ուսումնական յայտագիր-ծրագրերին ու դասագրքերին ներկայացուող նորագոյն պահանջները, կարեւորուել դրանց առջեւ դրուած խնդիրների նորովի լուծման անհրաժեշտութիւնը։ Թերթը, ի շարս բազմաթիւ հարցերի, բարձրացնում էր Զմիւնիայում ուսումնական խորհուրդ ստեղծելու անհրաժեշտութիւնը, որի չգոյութիւնը, բնականաբար, բացասաբար էր անդրադառնում դպրոցի կառավարման եւ ուսումնակրթական գործընթացի արդիւնաւէտ կազմակերպման աշխատանքների վրայ։

«Արեւելեան մամուլ»-ում զգալի տեղ էր յատկացուած Եւրոպական դպրոցների կառուցուածքի, առարկաների դասաւանդման

դրուածքի, դաստիարակութեան համակարգի, կրթական յայտագիր-ծրագրերի լուսաբանման յօդուածներին։ Այսպէս, օրինակ, հանդէսի մի շարք համարներում տպագրուել են Յովհաննէս Իփեքնեանի «Գերմանական մանկավարժութեան կարեւորութիւնը»<sup>5</sup>, «Կրթութիւն ի Լոզան եւ մանկավարժական հրահանգը»<sup>6</sup>, Դելիքնեանի խմբագրութեամբ «Ենայի համալսարան»<sup>7</sup> եւ այլ յօդուածներ։ Պարբերականում զգալի թիւ են կազմում եւրոպական եւ ռուսական դասական մանկավարժներին եւ նրանց ստեղծագործութիւններին նուիրուած յօդուածները, որոնց հիմնական նպատակն արտասահմանեան մանկավարժական մտքի նուաճումները հայ ժողովրդին ծանօթացնելն ու հաղորդելն էր։

«Արեւելեան մամուլ»-ի տարբեր համարներում տպագրուել են մանկավարժական բնոյթի յօդուածներ, որտեղ դիտարկուել են կանանց կրթութեան, դպրոցի դերի, լեզուի ուսուցման, դաստիարակութեան եւ ուսուցման տեսութեան, կրթութեան բովանդակութեան, ուսուցիչների մասնագիտական պատրաստուածութեան համար վարժապետանոցներ ստեղծելու եւ նրանց նիւթական ու բարոյակրաւական վիճակը բարելաւելու եւ այլ հիմնահարցեր։

«Արեւելեան մամուլ»-ը տպագրել է «Կրթութեան խնդիրը հայոց մէջ» ծաւալուն յօդուածաշարը, որտեղ յօդուածագիրը (անստորագիր) համեմատական զուգահեռներ անցկացնելով եւրոպական բարեկարգ վարժարանների եւ արեւմտահայ դպրոցների միջեւ՝ բացայատում է ազգային կրթութեան թերութիւնները, միաժամանակ բարձրացնում դպրոցն արմատապէս վերափոխելու խնդիրը։ Արձանագրուում է, որ ազգային դաստիարակութեան եւ կըրթութեան դիմաւոր թերութիւններից առաջինը տարբեր առարկաների գծով ուսուցողական դիտական սկզբունքների վրայ ստեղծուած դասագրերի պակասութիւնը եւ մասնագէտ ուսուցիչների բացակայութիւնն է։ Պարբերականը տարիներ շարունակ առաջադրել է ուսուցչի՝ իբրեւ սերունդներ «ուարբնող» ու «կրթող» արտօնեալ խաւի, քաղաքացիական որոշակի իրաւունքների ապահովման, նրանց բարոյական ու նիւթական վիճակի բարելաւման, մասնագիտական պատրաստութեան առանցքային հարցեր, որոնք

<sup>5</sup> Արեւելեան մամուլ, Զմիւռնիա, մայիս, 1873։

<sup>6</sup> Նոյն տեղը, դեկտեմբեր, 1875։

<sup>7</sup> Նոյն տեղը, փետրուար, 1876։

դառնալով հանդէսի ծրագրային հիմնադրոյթներ, շնորհիւ Մ. Մամուլեանի եռանդագին ջանքերի, մնացել են նրա նախագծային ծրագրերում նաեւ յետագայ տարիներին:

Թուրքական գրաքննութիւնն արգելափակի տակ դնելով պոլսահայ մշակոյթը եւ իր ուշադրութիւնն ամբողջութեամբ կենտրոնացնելով դրա վրայ, փաստօրէն, հսկողութիւնից դուրս էր թողել Արեւմտեան Հայաստանի գաւառների մշակութային կեանքը, հետեւաբար՝ «Արեւելեան մամուլ»-ը բաց դուռ էր նաեւ ազգային որոշ հրատապ խնդիրներ լուսաբանելու համար, մի ակնյայտ իրողութիւն, որով նա առանձնանում էր միւս պարբերականներից եւ դա էր պատճառը, որ Մամուլեանի հանդէսը վայելում էր բազմահազար ընթերցողների բարոյական աջակցութիւնն ու ջերմ համակրանքը: Եւ պատահական չէ, որ ժամանակի մամուլը եւ առաջադէմ մտաւորականութիւնը բարձր են գնահատել հանդէսի եւ նրա բազմավաստակ խմբագրի տեղն ու դերը հայ լրագրութեան եւ մամուլի պատմութեան զարգացման ասպարէզում: Լուսաւորութեան ու կրթութեան այդ մեծ երախտաւորի մասին Արշակ Ալպոյանեանը (1879-1962) գրում է. «Մամուլեան իրեւ գրագէտ անսովոր տիպար մը եղած է Թուրքիոյ հայոց մէջ, իրը Գաղափարի ժիր մշակ մը եւ ազգային բազմահմուտ ու արդիւնաւոր գործիչ մը: Այս քեղուն միտքը շարունակեց Տէտէեաններու սկսած գործը, ազգին ընծայելով բազմաթիւ ինքնագիր եւ բարգմանուած գործեր, որոնք մինչեւ հիմա չեն դադրած իրարու յաջորդող սերունդներու ընթերցանութեան առաջին գրքերը ըլլալէ...»<sup>8</sup>:

Անուանի բանասէր, հասարակական գործիչ եւ գրաքննադատ Հրանտ Ասատուրը (1862-1928) Մ. Մամուլեանի մասին գըրում է. «Ընդհանուր զարգացմանը եւ մտքի աշխոյթին շնորհիւ, ժամանակին հետ քայլած եւ միշտ նոր մնացած է: Վատա-

<sup>8</sup> «Արեւելեան մամուլ»-ի ազգային բաժնում տպագրուել են Մ. Մամուլեանի ընդարձակ քննական տեսութիւնները եւ պատմագննական խրոնիկ վերլուծութիւնները՝ նուիրուած Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիայի հայաշատ գաղթօջախների տնտեսական ու քաղաքական իրավիճակին, «Հայկական Հարցին» եւ դրա շուրջ ծաւալուած դիւնագիտական պայքարին, Արեւմտեան Հայաստանի նահանգների բարենորոգումների խնդրին եւ այլ հարցերին:

<sup>9</sup> Մաշտոցի անուան մատենադարան, Ա. Ալպոյանեանի Փոնդ, թղթ. 15, վաւ. 33, 1-2, 878 թերթ, «Տպագրութեան Արուեստը եւ Հայք» (ձեռագիր):

հութեամբ եւ կորովով գիտցած է տարածել այն գաղափար-ները, որոնք ամէնէն աւելի գործնական եւ օգտակար երեւցած են իրեն՝ ազգային յառաջադիմութեան տէսակէտով։ Միշտ լուրջ մտածում մը, հիմնաւոր տեսութիւն մը, հոգեբանական դիտողութիւն մը, բարբի ուսումնասիրութիւն մը կը ներկայացնէ մեզ, անոնց կցելով սեղմ, առոյգ, ջղուտ, նըկուն ոճի մը հրապոյըը։ Ունի յստակութիւն եւ պարզութիւն, փայլ եւ շնորհ։ Իր ամէն գրուածքներուն մէջ կ'երեւան մշակուած միտքը, ուղղամիտ ոգին, գեղասէրի նաշակը։ *Շահնաւրի* թղթակցութիւնները պիտի մնան իրը գեղեցիկ նմոյշներ լուրջ հեգնութեան եւ անկաշկանդ սրամութեան»<sup>10</sup>։

«Եռանդով եւ հմտութեամբ լի թերք մ'է Արեւելեան Մամուլ կոչուածը, զոր ի Զմիւռնիա կը հրատարակէ Մ. Մամուրեան, եւ որուն գրչի զգուշաւորութիւն եւ կարծեաց նուազ ազատականութիւն՝ առաւել փափաքնի եւ օգտակար պիտի ընէ իր թերքին շարունակութիւնը»<sup>11</sup>։

Կապիտալիզմի զարգացմանը ներյաւուկ հակասութիւնների ընոյթի ու պատճառների ուսումնասիրութիւնը (պայմանաւորուած հասարակութեան դասակարգային շերտաւորումով), հասարակութեան սոցիալ-տնտեսական, .. հասարակական-քաղաքական երեւոյթների գիտական բացատրութիւնները, գիտութեան եւ քաղաքակրթութեան հակասական, ոչ ներդաշնակ զարգացումը, պետութեան եւ ժողովրդի փոխյարաբերութեան հարցը, հայ ազգային ազատագրական պայքարի հիմնախնդիրը, Հայկական հարցի միջազգային դիւանագիտական քաշքուկների թնջուկից ձերբազատուելու ուղիների որոնման եւ այլեւայլ հարցերի քննարկում-դիտարկումներն ընդարձակ տեղ են գրաւել Մ. Մամուրեանի աշխատութիւններում եւ երկասիրութիւններում։ Անուանի մտաւորականն այդ հարցին մօտեցել է տարբեր նպատակաբանութեամբ եւ նոյնքան տարբեր առիթներով։

Սակայն մշտապէս առաջնորդուել է այն սկզբունքով, որ մարդկութեան երջանկութեան հիմքը նրա բնական իրաւունքը եւ ազատ գործունէութիւնն է, միայն այդ դէպքում մարդն իր բանականութիւնը մշակելով «... կարող կլինի իր կամքն ուղղել դէպ

<sup>10</sup> Հ. Ա.ՍԱՏՈՒՐ, Դիմաստուերմեր, Կ. Պոլիս, 1921, էջ 134։

<sup>11</sup> Գ. ԶԱՐՃԱՆԱԼԵԱՆ, Պատմութիւն հայերէն դպրութեան ի պէսս ուսման ազգային վարժարանաց, Վենետիկ, 1878, էջ 504։

ի բարին<sup>12</sup>, մշմարիտն ու գեղեցիկը (ընդգծումը՝ բնագրային)»<sup>13</sup>, քաջ գիտակցելով, որ իմաստափական այս հասկացութեւնները յաւերժական շարժման մէջ են գտնւում հասարակութեան զարգացման հետ եւ, որ բնութեան մէջ ոչինչ մնայուն չէ՝ բացի փոփոխականութիւնից:

Մ. Մամուրեանն արեւմտահայ գիտատեսական մտքի պատմութեան կարկառուն դէմքերից է, ում գիտական ժառանգութեան մէջ լայն տեղ է զբաղեցրել մանկավարժական հիմնահարցերի տեսական վերլուծութիւնը։ Դարավերջի տասնամեակներին արեւմտահայ մանկավարժական միտքը զարգացման նոր շրջան էր ապրում՝ իր առջեւ ունենալով յատկապէս ուսուցման հայեցակարգերի եւ դաստիարակութեան գիտական հիմքերի ստեղծման խնդիրը։ Ինչպէս մասնագիտական գրականութեան, այնպէս էլ մամուլի էջերում առաջ էին քաշւում ուսուցման եւ դաստիարակութեան տեսութեան, դպրոցական միասնական կանոնադրութիւնների, կրթական յայտագիր-ծրագրերի, օտար լեզուների դասաւանդման նոր մեթոդիկաների, ուսուցիչներ պատրաստող վարժապետանոցների ստեղծման եւ այլ հարցեր։ Որպէս լուսաւոր գաղափարների տէր առաջադէմ մտաւորական, ուսուցիչներ ու դպրոցավար, նոր մանկավարժութեան գաղափարակիր, Մամուրեանը, իրաւամբ, գտնւում էր դպրոցի ու լուսաւորական գաղափարների շարժման առաջին շարքերում։

Մ. Մամուրեանը ծնուել է Զմիւռնիայում (Իզմիր)<sup>14</sup> 1830 թուականի հոկտեմբերի 17-ին<sup>15</sup>։

<sup>12</sup> Այս եւ միւս բոլոր այն ընդգծումները, որոնց վերաբերեալ նշումներ չեն լինի, մերն են՝ Շ. Ռ.։

<sup>13</sup> Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ, Ազատութիւն, «Արեւելեան մամուլ», 1879, էջ 478։

<sup>14</sup> Հաստ պատմաժամանակաղրացին փաստարկների, Զմիւռնիան 3000-ամեայ պատմութիւն ունեցող հնակառոյց քաղաք է։ Այն կառուցուել է մ.թ.ա. 1410-1370 թուականներին, Փոքր Ասիայի Սիպիլ լեռնաշղթայի ստորոտում։ Լիւղիայի Տանտաղոս թագաւորի նախաձեռնութեամբ։ Քաղաքի նախնական անունը եղել է Նաւլոխոն, որը բառացի նշանակում է կայան, նաւահանգիստ (տե՛ս Հ. ՑԱԿՈԲ, Վ. ԳՈՍԵԱՆ, Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, Վիեննա, 1899, էջ 2)։

<sup>15</sup> Մամուրեանների գերդաստանը 18-րդ դարի վերջերին գաղթել էր նոր Զուղայից եւ մշտական բնակութիւն էր հաստատել Զմիւռնիայում։

Զմիւռնիան դարեր շարունակ գտնուել է հռոմէական կայսութեան տիրապետութեան տակ, ենթարկուել է թաթար-մոնղոլների աշխարհակալ ասպատակութիւններին, իսկ 15-րդ դարից սկսած գտնուում է Օսմանեան թուրքիայի տիրապետութեան ներքոյ:

19-րդ դարում Զմիւռնիան համարւում էր թուրքիայի հայշատ գաղութներից մէկը, որտեղ հայերի թիւը մինչեւ ցեղասպանութիւնը հասնում էր 12000-ի: Քաղաքի բնակչութիւնը բազմազդ էր՝ ֆրանսիացի, անգլիացի, հոլանդացի, իտալացի, գերմանացի, աւստրիացի, սլաւոններ, յոյներ, հրեաներ, քրդեր, արաբներ, պարսիկներ եւ այլն: Զմիւռնիան նաւահանգստային քաղաք էր, հետեւաբար այսեղ զարգացած էր առեւտուրը: Այդ մասին Քոսեանը գրում է. «Օսմանեան իշխանութեան տակ գտնուող նաւահանգիստ քաղաքներուն մէջեն ամէջեն աւելի Զմիւռնիա վայելած է եւ կը վայելէ վաճառականութեան պըտուղները»<sup>16</sup>:

Զմիւռնիան թէ՛ իր աշխարհագրական զարմանահրաշ դիրքով, գեղատեսիլ բնութիւնով, առողջարար մաքուր օդով, եւ թէ՛ մշակութային հնագոյն կոթող-յուշարձաններով՝ դարեր շարունակ եղել է Եւրոպայի ճանապարհորդների հիացմունքի քաղաք-թանգարանը: Դեռեւս անտիկ շրջանում, երբ Ստրաբոնն առաջին անգամ տեսել է Զմիւռնիան, անզուսպ հիացմունքով բացականչէլ է՝ «... այս քաղաքն ամենագեղեցիկն է իմ տեսած բոլոր քաղաքների մէջ»: Ֆրանսիացի ականաւոր բանաստեղծ, գրականագէտ, արուեստագէտ եւ պատմագէտ Լամարտինը Զմիւռնիան համարել է Արեւելքի աստղ, իսկ իր բանաստեղծութիւններից մէկում նրան անուանել է յոնիական ծովի թագուհի: Պիեռ դը Լուքոն այնքան էր զմայլուած Զմիւռնիայի գեղատեսիլ եւ վեհաշուաք ծովախորշով, որ այն առաւել է դասել նոյնիսկ Մարսիլիայի, Զենովայի եւ Նէապոլի գեղահրաշ ծովախորշերից:

Մամուրեանի մանկութիւնն անցել է այս հրաշէկ քաղաքում եւ, անկասկած, այն իր հետքը պիտի թողնէր ապագայ գրողի եւ համաշխարհային դասական գրականութեան լաւագոյն ստեղծագործութիւնները թարգմանող արուեստագէտի հարուստ ներաշխարհի եւ նրբաճաշակ գեղագէտի հայեացքների ձեւաւորման վրայ:

<sup>16</sup> Հ. ՔՈՍԵԱՆ, նշ. աշխ., էջ 20:

Այսուհանդերձ Զմիւռնիան միայն թանգարան չէր բաց երկընքի տակ, այն եղել է նաեւ երկրաշարժների եւ տարերային այլ աղյունների, հրդեհների եւ տարատեսակ համաճարակների քաղաք<sup>17</sup>:

**Այսպէս,** երբ 1836-1837 թուականներին Զմիւռնիայում բըռունկուեց ժամտախտի մահատարած համաճարակ, Մամուռեանների ընտանիքը հեռացաւ Զմիւռնիայից եւ հանգրուանեց Սիրիայում՝ ապա Եգիպտոսում: Հայկական դպրոց չլինելու պատճառով, փոքրիկ Մատթէոսը 1839 թուականին, երկու տարի ուշացումով, ընդունուեց Ալեքսանդրիայի յունական դպրոց՝ կարճ ժամանակում սովորելով յունարէն ու արաբերէն լեզուները: Մամուռեանի հայրը մասնագիտութեամբ արհեստաւոր լինելով հանդերձ, կրթութեան յարգն իմացող անձնաւորութիւն էր, հետեւապէս մտահոգուած լինելով, որ օտար միջավայրում որդիները կը մոռանան իրենց մայրենի լեզուն, մեծ զոհողութիւնների գնով 1842 թուականին նրանց ուղարկեց Զմիւռնիա՝ Մեսրոպեան վարժարանում կրթութիւնը շարունակելու նստատակով<sup>18</sup>: Յետադարձ հայեացք ձգելով իր ուսումնառութեան տարիների Մեսրոպեան վարժարանի վրայ՝ Մամուռեանը սրտի ցաւով էր վերյիշում յատկապէս վարժարանում տիրապետող դասային խորականութիւնը, որի մասին յետագայում պիտի գրէր. «Ի՞ր նշանաւոր ընթացաւրտ, իբր ուսումնաւարտ, Մեսրոպեան վարժարանէն հրաժարող ապիկար, տգէտ, մինչեւ իսկ հայերէն երկտող գիր մը

<sup>17</sup> Միայն 1675 թուականին Զմիւռնիայում տեղի է ունեցել 6-ից աւելի բարձըր բալանոց երկարաշարժ, 1688-ին այստեղ ըռնկուել է սոսկալի հրդեհ, սաստիկ երկարաշարժ է գրանցուել նաեւ 1739, 1778 թուականներին:

<sup>18</sup> Մեսրոպեան վարժարանը հիմնուել է 1799 թուականին Զմիւռնիայում Ապրոյեան յայտնի գերդաստանի նախաձեռնութեամբ: 1825 թուականին կառուցուել է դպրոցի յարմարաւէս չննքը, որը յետազայում հրդէհի ճարակ է դարձել ու վերաստին վերակառուցուելի իր փառահեղ կենսագրութեամբ դրացը, իրաւամբր, վաստակել է «Հայոց Աթէնք» պատուաւոր անունը: Դպրոցը տուել է հայ գրականութեան, արուեստի, գիտութեան եւ հրապարակախօսութեան շատ յայտնի գործիչներ: Այստեղ են իրենց նախնական կրթութիւնը ստացել Մ. Մամուռեանը, Մտ. Ոսկանը, Գ. Կոստանդեանը, Գր. Զիլինկիրեանը, Մ. Նուպարեանը եւ շատ ուրիշներ, որոնցից շատերը Եւրոպայում ստացել են բարձրագոյն կրթութիւն, վերադարձել են իրենց ծննդավայրը եւ պաշտօնավարել Մեսրոպեան-Հռիփսիմեան վարժարաններում իրբեւ ուսուցիչներ, տեսուչներ ու դպրոցավարներ:

գրելու անկարող սաներ լեգեններ կը կազմեն, որոնց մի քանի նմոյշները դեռ կենդանի են մեր եւ մեր ուսութեան խօսուն վկաներ: Խւստի, երբ որ դպրոցական ոսկեդար կը հոչակուի կարգ մը միամիտներու կողմէ Մեսրոպեան վարժարանի նախնական շրջանները, չեմ կարող իմ ծիծաղս բըռնել»<sup>19</sup>: Իբրեւ առաջադէմ լուսաւորիչ մանկավարժ Մամուլեանը դէմ էր հասպաշտութեանը: Այն, որ Մեսրոպեան վարժարանը 19-րդ դարի 40-50-ական թուականներին մեծ հռչակ ունէր, դա անժըխտելի իրողութիւն էր, սակայն նա ողջամիտ չէր համարում այն անհիմն վկայակոչումները, ըստ որի, իբր այդ տարիններին կըրթութեան դրուածքը վարժարանում աւելի բարւոք էր եւ, որ իզմիրցիք աւելի գրագէտ եւ կրթասէր էին, քան յետագայ տարիններին: Նման կարծրամիտ մտածելակերպի հետ Մամուլեանը բընաւ համակարծիք չէր, որովհետեւ քաջ գիտակցում էր,..որ հասարակութեան զարգացման համընթաց փոխւում է նաև դպրոցի կրթական մակարդակը, նորացւում են ուսուցման խնդիրներն ու պահանջները:

Հին սերնդի աւագանին՝ յետադիմական կղերապահպանողականները, ղեկավարման բոլոր լժակներն ամուր պահում էին իրենց ձեռքում եւ ոչ միայն փակում, այլ շատ յաճախ նաև խափանում էին եւրոպական համայսարաններում իրենց կրթութիւնը ստացած, նոր գաղափարներով սնուցուած երիտասարդ սերընդի ճանապարհը՝ փորձելով ամէն կերպ երիտասարդութեանը պահել հին մտածողութեան կաղապարների մէջ:

Մ. Մամուլեանն առաջիններից մէկն էր, որ իր համարձակ յօդուածներով, մանկավարժական վերլուծաբանական ուսումնասիրութիւններով ու նոր գաղափարաբանութեամբ կարողացաւ հին ու նոր սերունդների յաւերժական պայքարում նորի, առաջադիմականի յաղթականի համար ճիշտ ուղիներ գտնել՝ միաժամանակ մեկնաբանելով, որ հնի ու նորի պայքարը չպէտք է ֆետիշացնել եւ վտանգայարոյց դարձնել: Ենելով իր հասարակգիտական առաջադիմական գաղափարներից Մամուլեանը հնի եւ նորի յաւերժական հակամարտութիւնը, այսուհանդերձ, փորձում էր լուծել դրանց դիալեկտիկական միասնութեան զարգացման տեսանկիւնից՝ «Եթէ կայան մը կայ մեզի համար,- գրում է նա,- ըստ իս՝ սա է, նորը հինին վրայ պատուատել, նախ

<sup>19</sup> «Արեւելեան մամուլ», Զմիւռնիա, 1899, էջ 212:

ներկայ մը հիմնել եւ ապա ապագայ մը յարդարել: Ժողովուրդ մ'իր անցեալէն զատելը՝ լիովին մահացնել է, միմիայն անցեալին մէջ պահելը՝ հաշմել»<sup>20</sup>:

1845 թուականին Մամուրեանը բարձր առաջադիմութեամբ աւարտեց Մեսրոպեան վարժարարանը, իսկ 1846 թուականին երջանիկ պատահականութեամբ նա դարձաւ Փարիզի Մուրադ Ռափայէլեան վարժարարանի սան, մի հանգամանք, որը նրա առջեւ բացեց առաջադիմութեան ու զարգացման նոր հեռանկարներ: Առաջին հերթին նա խորանում է ֆրանսերէնի եւ անգլերէնի իմացութեան մէջ, միաժամանակ սովորում է իտալերէն, կարդում եւ ուսումնասիրում է եւրոպական առաջադէմ գրողների ստեղծագործութիւնները: 1850 թուականին Մամուրեանը փայլուն աւարտեց վարժարանը՝ արժանանալով Լամարտինի ընծայած դափնեպսակին<sup>21</sup>: Այդ մասին Հ. Ասատուրը գրում է. «Ֆրանսիացի մեծ բանաստեղծին եւ ուսմանքի ընդգծումը՝ բնագրային» գրագէտին ձեռքէն ստացուած այս դափնին յուռութէ մը կ'ըլլայ ապագայ հայ գրագէտին համար որ օր մը իր քարգմանութիւններով ու գրուածքներով՝ ուսմանքի գրապաշտ՝ Շ. Ո.) գրականուրեան երկերը պիտի ճանչցնէր ու սիրցնէր իր ազգակիցներուն»<sup>22</sup>:

Վարժարանի տեսչութիւնը Մամուրեանին տալիս է փայլուն բնութագիր, մասնաւորապէս մատնանշելով, որ ուսումնառութեան տարիներին նա եղել է «միշտ բարերարոյ, խոհական, ուշիմ, ճարտար եւ յամենայմի յառաջադէմ»<sup>23</sup>: Հարուստ գիտելիքներով եւ մեծ տպաւորութիւններով 1850 թուականին Մամուրեանը վերադարձաւ Զմիւռնիա, որտեղ «բարձր հասարակայնութիւնը» նրան դիմաւորեց ընդգծուած սառնութեամբ եւ նոյնիսկ նրան աշխատանք չառաջարկուեց Մեսրոպեան վարժարանում: Թերեւս դա էր պատճառը, որ 1851 թուականին Մար-

<sup>20</sup> ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ, Երկեր, Ե., 1966, էջ 390:

<sup>21</sup> Լամարտին Մարի Լուի Ալֆոնս (1790-1869), ֆրանսիացի բանաստեղծ, պատմաբան եւ քաղաքական գործիչ: Եղել է Մամուրեանի ուսուցիչը Մուրադ Ռափայէլեան վարժարանում:

<sup>22</sup> Հ. ԱՍԱՏՈՒՐ, Դիմաստուերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 122:

<sup>23</sup> Մ. Մամուրեանը ստանում է երկրորդ կարգի մրցանակ: Առաջին կարգի մըրցանակի արժանանում է Յովսէփ Մելգումեանը, որը յետադայում դարձաւ հանրաճանաչ դիւնապէտ Դարսկաստանում: Գրականութեան մէջ յայտնի է Մելքոն Խան անունով:

կոս Աղաբէկեանի<sup>24</sup> («Կոռւնկ Հայոց աշխարհին» թերթի խմբագիր) հետ նա հիմնեց մասնաւոր վարժարան, որը պէտք է գործէր ժան ժակ Ռուսոյի բնական եւ ազատ դաստիարակութեան սկզբունքներով։ Վարժարանի սաների նախաձեռնութեամբ ստեղծուեց թատերական խմբակ։ 1853 թուականի օգոստոսին աշակերտները մաքուր աշխարհաբարով թատերական ներկայացում կազմակերպեցին։ Այդ առթիւ Մամուրեանը հանդէս եկաւ գեղեցիկ ճառով։ այն ամբողջութեամբ տպագրուեց «Մասիս» օրաթերթում։ Մակայն վարժարանն ունեցել է կարճ կեանք, մի որոշ ժամանակ գործելուց յետոյ այն փակուել է։

Տեղի յետադիմականների հետ անպտուղ հակամարտութիւններից յոգնած ու հիասթափուած, Մամուրեանը 1853 թուականին հեռանում է ծննդավայրից եւ հաստատում է կ. Պոլսում։ Շուտով նշանակում է Խասդիւղի Ներսիսեան վարժարանի տեսուչ, սակայն նրա տեսչական աշխատանքն ընդհատում է վարժարանի աննախադէպ փակման պատճառով։ Այս շրջանում Մամուրեանն ապրում էր նիւթական ու բարոյական խոր ճգնաժամ։ Ապրուստի միակ միջոցը թարգմանութիւններն էին։

Մուրադ Ռափայէլեան վարժարանում Մամուրեանը ոչ միայն հիմնովին իւրացրել էր հայագիտութիւնն ու պատմագիտութիւնը, հմտացել լեզուների միմացութեան մէջ, կատարելապէս տիրապետել գրաբար լեզուին, այլեւ իր վրայ խորապէս կրել էր ինչպէս ֆրանսիական լուսաւորիչ մատերիալիստ փիլիսոփաների (Դիդրոյ, Հելուեցիուս, Հոլբախ, Կոնդիլեակ եւ ուրիշներ), այնպէս էլ եւրոպական իրապաշտ գիտնականների ազդեցութիւնը (Վոլտէր, Դաւիթ Իւմ, Աղամ Սմիթ եւ ուրիշներ)։ «Մասիս»-ում նա հրատարակեց Վոլտէրի «Զատիկ»-ը, որը 1854 թուականին լոյս տեսաւ իրեւ թերթօն՝ առանց նշելու հեղինակի անունը, քանի որ «... անկրօն Վոլթէրի անունը գէշ պիտի հնչէր բարեպաշտ ընթերցողներու ականջին»։ Շուտով նոյն թերթում ակըսեց անստորագիր թարգմանել ու հրատարակել Վոլտէրի եւս երկու իմաստասիրական պատմուածքներ, իսկ 1856 թուականին նա թարգմանեց նոյն հեղինակի «Միքրօ-մեդաս»-ը, որը միւս գոր-

<sup>24</sup> Մարկոս Աղաբէկեանի խմբագրութեամբ 1866-1867 թուականներին հրատարակուել է նաև «Միլն Աւարայրի» ազգային, լանասիրական միամսեայ հանդէսը, որն ունէր ազգային-պահպանողական ուղղութիւն։ Մամուրեանը որոշ շրջանում յարել է Մ. Աղաբէկեանի պահպանողական գաղափարներին։

ծերի պէս լոյս տեսաւ որպէս բանասիրական՝ առանց հեղինակի անունը նշելու։ Սակայն Մամուրեանը, որքան էլ փորձեց թաքցնել իր ինքնութիւնը եւ պարբերականում հանդէս եկաւ ծածկանունով, այնուամենայնիւ այդ փաստը չվրիպէց արեւմտահայ պահպանողական թեւի պարագլուխ Յովկաննէս Զամուռճեանի ամենատես աչքից։ Նա իր խմբագրած «Զոհալ»-ում հանդէս եկաւ թունոտ յօդուածներով «անհաւատ սոցիալիստ Վոլքը էրի եւ նրա հայ թարգմանչի դէմ»։ Իր հերթին Մամուրեանը «Մասիս»-ում հանդէս է գալիս հակընդդէմ յօդուածով եւ հեգնախառը զայրոյթով՝ դիմելով «Զոհալ»-ի խմբագրապետին հարցադրում՝ «Վոլքոն կարդացողը միթէ անհաւա՞տ կ'ըլլայ, Պղատոն եւ Արիատոտէլ կարդացողը միթէ կուապա՞շտ կ'ըլլայ. Զօհալ կարդացողը միթէ միզվի՞թ կ'ըլլայ (ընդգծումը՝ բնագրային)»<sup>25</sup>։

1856 թուականին Մամուրեանն աշխատանքի անցաւ Մկըրտիչ Ճեղայիրեանի առեւտրական գրասենեակում որպէս քարտուղար եւ թարգմանիչ ու նրա առեւտրական գործերը վարելու նպատակով մեկնեց Մալթա՝ ապա նաեւ Լոնդոն, մի հանգամանք, որը նրա համար լայն հնարաւորութիւն ստեղծեց ինչպէս կըրթութիւնը շարունակելու, այնպէս էլ ծանօթանալու անգլիական փիլիսոփայական, գրական եւ տնտեսագիտական մտքի կարկառուն ներկայացուցիչների ստեղծագործութիւններին։ Ճեղայիրեան ամիրայի առեւտրական գործերը կարգաւորելուց յետոյ Մամուրեան՝ իբրեւ ազատ ունկնդիր, 1856-1857 թուականներին յաճախում է Քեմբրիջի համալսարան, որտեղ լսում է ժամանակի խոչոր գիտնականների դասախոսութիւնները քաղաքատնտեսութիւնից, փիլիսոփայութիւնից, բարոյագիտութիւնից, բնագրով կարդում է Բայրոնի ստեղծագործութիւնները, իւրացնում անգլիական տնտեսագիտ-քաղաքատնտեսների եւ սոցիալիստ ուտոպիստների ուսմունքները<sup>26</sup>։ Առիթից առիթ Մամուրեանը հնարաւորութիւնին է ունենում մասնակցել նաեւ Բրիտանական համայնքների պալատի նիստերին, մօտիկից ուսումնասիրում է բրիտանական պառլամենտական համակարգի կառուցուածքային առա-

<sup>25</sup> Հ. Ա.Ս.ՏՈՒՐ, նշ. աշխ., էջ 124.

<sup>26</sup> Մ. Մամուրեանն առանձնապէս խորութեամբ է ուսումնասիրել Ռոբերտ Օուենի (1771-1858) հասարակագիտական եւ սոցիալիստական ուսմունքները, նոյնիսկ իր աշխատութիւններում ամրողական քաղուածքներ է մէջբերել, սակայն քննադատաբար է մօտեցել նրա որոշ գաղափարներին։

նձնայատկութիւնները, փորձում բացայայտել այդ համակարգի ընդունելի եւ խոցելի կողմերը։ Այդ ընթացքում նա խորազնին ծանօթանում է նաեւ անգլիական դասական քաղաքատնտեսութեան տարբեր ուղղութիւնները ներկայացնող տնտեսագէտների ուսմունքներին։ Լոնդոնից Մամուրեանը «Մասիս»-ին է ուղարկում «Թայմս»-ի յօդուածներից կատարած ընտրանի թարգմանութիւններ։ Այս տարիներին էլ նա սկսեց գրել իր «Անգլիական նամականի»-ն եւ հաւանաբար այստեղ է թարգմանել նաեւ «Ֆիլտին»-ը, որը 1859 թուականին պարբերաբար հրատարակուեց «Մասիս»-ի համարներում, իսկ յետագայում տպագրուեց նաեւ առանձին գրքով։

1881 թուականին Զմիւնիայի Տէտէեան տպարանում լոյս է տեսնում Մամուրեանի «Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» խորագրով երկասիրութիւնը։ Թէ ինչո՞ւ է ընտրել գրքի այսօրինակ խորագիրը, Մամուրեանը ներածութեան մէջ փորձում է հիմնաւորել հետեւեալ կերպ։ «Կան այս նամակներուն մէջ ակնարկութիւններ, անգլիական տեսակէտով կարծիքներ, որ թերեւս ընթերցողին ֆիշ մը մութ երեւին, կան նաեւ անաշառ դատումներ եւ յանդուգն տեսութիւններ, որ թերեւս ինքնասիրութիւնը ֆիշ մը կծեն, վիրատրեն եւ մեր նախապաշարմունքը վրդովկն, սակայն պէտք չէ մոռնալ թէ՝ գրողներն անգլիացիներ են, որ մեր վիճակն իրենց յատուկ դիտակով կը դիտեն ու կը դատեն...։

Թէեւ այս Ամականիթի՛ նիւթեն ու գոյնն այլագան, բուն ոգին հայկական է, եւ իրողութիւններու թափուն յարակցութիւն մը ունի։ Ուստի արժան դատեցի Հայու մը նակատագիրը կցել իր հին անգլիական անուան (ընդգծումները՝ բնագրային)»<sup>27</sup>։

Սոյն Նամականին հրապարակախոսական ժանրի հետաքրքիր մի ստեղծագործութիւն է, որտեղ հերոսները ասում-խօսում եւ միմեանց հետ հաղորդակցւում են նամակների միջոցով։ Հեղինակը բազմաժանր գրողին իւրայատուկ տրամաբանութեամբ եւ իր ասելիքը այլաբանօրէն ընթերցողին կէս խօսքից հասկանալի դարձնելու գիտակցութեամբ է ընտրել գրելու այս ձեւը։

Նամակների միջոցով հեղինակն անում է նպատակաբանական մեկնաբանութիւններ՝ մի կողմից բարձրացնում է արեւմը-

<sup>27</sup> ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆՆ, Երկեր, Ե., 1966, էջ 56.

տահայութեանը յուզող հրատապ հարցեր՝ դպրոց, կրթութիւն, լուսաւորութիւն, ազգային-ազատագրական շարժումներ եւ այլն, իսկ միւս կողմից իրապաշտ գրողի եւ արուեստաբանի վարպետութեամբ ուրուագծում արեւմտահայութեան սոցիալական, տնտեսական, հասարակական ու քաղաքական կեանքի իրական պատկերը, ներկայացնում հայ ժողովրդի տարագրութեան աղետալի հետեւանքները, փորձում բացայացտել գաղթականութեան եւ պանդխտութեան սոցիալ-քաղաքական պատճառները՝ հետապնդելով մի սուրբ նպատակ՝ կասեցնել «Թուրքահայ համատարած գաղթականութեան առաջքը, գաղթականութիւն, որն սպառնում էր «պատմական ստուերի» վերածել Հայաստան աշխարհը»<sup>28</sup>:

Իր նամակներից մէկում Մամուրեանը հայրենասէր հայի ներքին հպարտութեամբ գրում է. «Հայր գերի է կ'իմացընես. բարեկամ'մ. սակայն ըստ իս' հայ կոչուիլ եւ գերի լինիլ հակասական է: Այս կարծեացս հաստատութեան եւ վկայութեան համար ահա ետեւէ ետեւ առաջ կ'ելնեն Հայկ, Արամ, Արա, Վահէ, Տիգրան, Վարդան, Վահան, Գագիկ, Աշոտ եւ շատ մը դիւցազուններ: Ուստի չեմ կարող հասկընալ եւ հաւատալ, որ այժմեան տեսած հայերդ անոնց սերունդէն իջած լինին...»<sup>29</sup>, ուրեմն հնարաւոր չէ հաւատալ, որ այդպիսի նախնիներ ունեցող հնադարեան մի ժողովուրդ իր վրայ կրի օտարի լուծը եւ ապրի ճնշուած ու աղքատ: Այսուեղ Մամուրեանի խնդիրը ոչ այնքան անցեալի սիրագործութիւնների եւ այն կրողների յիշատակութիւնն է, որքան այդ փառահեղ անցեալը նորօրեայ ազատագրական շարժումներին ծառայեցնելու մղումն է, որպէսզի «տնտեսապէս հզօրացած», «մտաւորապէս զարգացած», «ժամանակակից զենքով զինուած» հայ ժողովուրդը գտնի հնարաւոր ուղիներ իր վըրայից օտարի լուծը թօթափելու համար:

«Անգլիական նամականի»-ն՝ իբրեւ՝ համակրութեան եւ յարգանքի տուրք, Մամուրեանը ձօնել է Յովսէփի Շիշմանեան-Մերենցին՝ Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանի իր սիրելի դաստիարակին եւ ուսուցչին:

Յետագայում նախկին սանը եւ ուսուցիչը դառնում են գաղափարական համախոհներ եւ 1860 թուականին իրենց համակիր-

<sup>28</sup> Տե՛ս Նալբանդեանը եւ նրա ժամանակը, հատոր 1, էջ 490:

<sup>29</sup> ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ, Երկեր, Ե., 1966, էջ 90:

ների հետ միասին հիմնում են «Բարեգործական» ընկերութիւնը: Յ. Շիշմանեանը կազմում է ընկերութեան յայտարարութիւն-կանոնադրութիւնը, ըստ որի Արեւմտեան Հայաստանի գաւառներում եւ Կիլիկիայում դպրոցաշխնութեան հետ մէկտեղ, պէտք է զարկ տրուէր նաեւ երկրագործութեանը եւ գիւղատնտեսութեանը, երկրում պէտք է կառուցուէին երկաթգծեր եւ փոխադրական այլ միջոցներ, ժողովրդին պէտք է լուսաւորէին տնտեսագիտական եւ երկրագործական գիտելիքներով: Այդպիսի առաքելութեամբ Ծերենցը մեկնում է Հայոց գաւառներ եւ Կիլիկիա:

Դժուար չէ կուահել, որ Մամուրեանը 60-ական թուականներին կրել է ազգային-պահպանողական հոսանքի ազդեցութիւնը, մասնաւորապէս, Ծերենցի եւ Մարկոս Աղաբէկեանի գաղափարական ազդեցութիւնը, իսկ դրա վառ ապացոյցը նաեւ Մամուրեանի «Անգլիական նամականի»-ն է, որը մի կողմից ազդարարում է, որ Մամուրեանը եղել է ազգային-պահպանողական հոսանքի գաղափարակիր, իսկ միւս կողմից վկայակոչում, որ Մամուրեանը գաղափարական անցում է կատարել պահպանողականութիւնից դէպի լուսաւորական-յեղափոխական ժողովրդավարութիւն:

1858 թուականին սկսուեց Մամուրեանի շրջագայութիւնների շրջանը. նա եղաւ Փարիզոյմ, Վիեննայում, Վենետիկում, Հռոմում, Պետերբուրգում եւ այլ վայրերում: Այս շրջագայութիւններն ինքնանպատակ չէին անուանի մտաւորականի համար: Լինելով եւրոպական տարբեր երկրներում, Մամուրեանը հնարաւորութիւն ունեցաւ մօտիկից ծանօթանալու այդ երկրների դպրոցական ու կրթական համակարգերին, մանկավարժութեան, հասարակագիտութեան եւ մարդաբանական այլ գիտութիւնների արդիական ուղղութիւններին, դրանց գիտական նուաճումներին, ուսուցման նորագոյն մկրպունքներին ու մեթոդներին, առանձնապէս մանրակրկիտ ուսումնասիրեց դասագրքերի ստեղծման եւրոպական առաջաւոր փորձը, որը յետագյում վարպետօրէն կիրառեց իր բազմաքանակ դասագրքերի ստեղծման գործում:

Այսպէս, երբ 1868 թուականին Ազգային վարչութեան որոշմամբ Մ. Մամուրեանը ստանձնեց Զմիւռնիայի Մեսրոպեան-Հոկիսիմեան երկսեռ վարժարանի տեսուչի պաշտօնը՝ վերանայելով կրթական ծրագրերը, կատարեց մի շարք բարեփոխումներ եւ ուսումնական յայտագրում առաջին անգամ մտցրեց «Առտնին

տնտեսութիւն»<sup>30</sup> առարկան: Սոյն առարկան նախատեսւում էր դասաւանդել Հռիփիսիմեան վարժարանի Գ. եւ Դ. դասարաններում: Մամուրեանն այդ մասին յիշատակում է հետեւեալը. «Դժբաղդօրէն՝ ինչպէս ուրիշ շատ ուսմանց՝ նոյնպէս Տնտեսութեան դասգրքեր կը պակսէին մեր մէջ. հետեւապէս պարտաւորուած էի պատրաստել նախ դասախոսութիւններ եւ ապա բերանացի աւանդել որ գրի առնուն աշակերտուիիններն, եւ կամ ինքու գրել եւ ապա օրինակել տալ: Ահա այս դասերուն ուրուագրերն ամփոփելով արժան կը դատեմ ի լոյս ընծայել»<sup>31</sup>:

Ի՞նչ սկզբունքների հիման վրայ է Մամուրեանը ստեղծել սոյն դասագիրքը: Մինչ դասագրքի ստեղծելը, Մամուրեանին մտահոգել է երկու կարեւոր հարցի պարզաբանում:

ա. - ինչպիսի<sup>32</sup> «տնտեսութիւն» պէտք է աւանդուէր հայ աղջիկներին,

բ. - ի՞նչ չափով այդ առարկան պէտք է աւանդուէր եւ, որ ամենակարեւորն է, արդեօք հայ ընտանիքի սոցիալական եւ ընտանեկան-կենցաղային վիճակը կը ներէր միատիպ, միարժէք «տնտեսութեան» դասագիրք ստեղծելու համար:

Մամուրեանն այս հարցերին տալիս է միանգամայն ճիշտ պատասխան: Նախ «Առտնին տնտեսութիւն»-ը՝ իրեւ ուսումնական առարկայ, էապէս տարբերուում է «բարոյագիտութիւն» եւ «մարմնամարզանք» առարկաներից, քանի որ բոլոր ազգերն առանց զգալի փոփոխութիւնների կարող են այդ առարկաները դասաւանդել իրենց դպրոցներում, այսինքն՝ ուսումնական այդ դիսցիպլինների (առարկայակարգերի) սահմանները եւ օրէնքները բացայացուած են, նախապէս որոշուած են, ուսուցչին մնում է միայն դրանք յարմարեցնել տուեալ դասարանի առաջադիմութեանը եւ երեխանների ու դասարանի առանձնայատկութիւններին: Մինչդեռ նոյնը հնարաւոր չէ ասել «Առտնին տնտեսութիւն» առարկայի համար, քանի որ նոյնիսկ առաջադէմ ժողովուրդները տարբեր տնտեսական պահանջներ ունեն՝ հետեւաբար նաեւ տարբեր դասագրքեր, եւ քանի որ հայերի ընտանեկան, սոցիալական, կենցաղային եւ ազգային կեանքն այլաձեւ է եւ ենթակայ է բա-

<sup>30</sup> Արդի հասկացութեամբ դա «Տնարարութիւն» առարկան է:

<sup>31</sup> Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ, Առտնին տնտեսութիւն, Կ. Պոլիս, 1890, էջ 9:

ցառիկ հանգամանքների, ուրեմն այս հարցին պէտք է մօտենալ միանգամայն այլ տեսանկիւնով:

Մամուրեանի կարծիքն այն է, որ Օսմանեան թուրքիայում, ճակատագրի բերումով, հայերը, բառի իսկական իմաստով, զըրկուած են «քուն հայկական կեանք» ունենալու հնարաւորութիւնից՝ իրենց բազմադիմի յարաբերութիւնների եւ զարգացման ոչ բնականոն օրէնքների առկայութեան պատճառով՝ «Ըստ տեղւոյն եւ ժաղաքական կացութեան Հայը կը փոխէ իր ուտեստն, իր զգեստն, իր բնակարանի կարգադրութիւնն, իր տան վաշութեան ձեւն, եւ մինչեւ անգամ իր առողջապահիկ պայմանները. խնդիրներ՝ որ տնտեսութեան կարեւոր նիւթը կը կազմեն: Ուրեմն մեր ժողովրդեան տնտեսական վիճակն ո՞ր օտար ազգի տնտեսութեան կը յարմարէր ամենուն եւ ոչ մէկուն առանձին»<sup>32</sup>: Ահա խնդիրը, որի ճիշտ լուծումով էլ պայմանաւորուած էր արեւմտահայ կեանքում նմանատիպ դասագիրք ստեղծելու եւ ունենալու հնարաւորութիւնը:

Իր դասագիրքը ստեղծելու համար Մամուրեանը, անկասկած, ձեռքի տակ ունեցել է հարուստ գրականութիւն, ուսումնասիրել է տարբեր երկրների դպրոցներում կիրառուող ժամանակի քիչ թէ շատ բարեկերտ դասագրքերը եւ եկել այն համոզման, որ դրանցից նոյնիսկ լաւագոյնները յարմար չեն հայ աղջիկների տնտեսավարութեան՝ դաստիարակութեան համար: Այսպէս, օրինակ, Փրանսիական դպրոցներում լայն կիրառութիւն են ունեցել իբոյի, Պելեզի, Պիտարի եւ այլոց դասագրքերը: Պիտարի դասագիրքը կրում էր «Տանտիրուհու գիրքը» խորագիրը: Մտուարածաւալ այս գիրքն ունէր երեք բաժին՝ տնապահիկ խոհարարութիւն, բուժային գեղամիջոցներ, մարմնամարզութիւն եւ խաղ: Դասագիրքն ունէր գործնական-կիրառական եւ հանրագիտարանային ուղղուածութիւն: Ինչ խօսք, դասագիրքը բաւարարում էր ընտանեկան կենցաղավարութեան պահանջները, սակայն հեռու էր կատարեալ դասագիրք լինելու չափանիշներից:

ԱՄՆ-ում լայն տարածում ունէր Պիչրի կազմած «Տնտեսութիւն» դասագիրքը, որը նպատակ ունէր բնախօսական եւ կենսապահչիկ դասերին հաղորդել գործնական ոգի, աղջիկներին տալ ինչպէս կենցաղային բարեկարգութեան, այնպէս էլ արուեստների եւ արհեստների վերաբերեալ օգտակար գիտելիքներ:

<sup>32</sup> Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ, նշ., աշխ., էջ 7:

Անգլիայի դպրոցներում կիրառութեան մէջ էին Ցեսաէլի «Տնտեսութիւն» եւ Ուիթի «Ապագայ տնտեսուհին» դասագրքերը, որոնք շարադրուած էին ժամանակի տնտեսավարութեան եւ կենցաղի պահանջներին համապատասխան, ունիին ընտիր հրահանգներ եւ տեղեկատութիւն տնտեսութեան զանազան ճիւղերի վերաբերեալ, սակայն արեւմտահայ կեանքում եւ կենցաղում դրանք կիրառելի չէին:

Ճշմարիտ է, որ ամէն արհեստ ու գիտութիւն ունի իր հիմնական սկզբունքներն ու օրէնքները: Տնտեսավարութիւնը նոյնպէս ունի իր էական հիմունքները. տնային կարգապահութեան, մատակարարութեան, մաքրութեան, խնայողութեան եւ այլ գործօնների պայմանները գրեթէ նոյնն են բոլոր զարգացած եւ քաղաքակիրթ ազգերի համար: Սակայն խօսել միայն ընտանիքի տնտեսութեան նիւթական կողմերի վրայ, առանց անդրադառնալու ընտանիքի բնախօսական եւ առողջապահական խնդիրներին, որոնցով պայմանաւորուած են դրանք, բոլորովին էլ տրամաբանական չէ: Տնտեսավարութեան զանազան ճիւղերն այնքան սերտ են կապուած միմեանց հետ եւ այնքան ներգործուն են ընտանեական կեանքի վրայ, որ մէկի իմացութիւնն անըմբոնելի կը դառնայ, եթէ միւսները չբացայացեն, չլուսաբանեն բարեկեցիկ կենցաղավարութեան հիմնական օրինաչափութիւնները:

Կնոջ տնտեսագիտական դաստիարակութեան վերաբերեալ Մամուրեանն ունէր առաջադիմական մօտեցումներ, կնոջ դերը չէր սահմանափակում սոսկ ընտանեկան-կենցաղային շրջանակներում, նա կարեւորում էր նաեւ կնոջ հասարակական գործունեայ դերակատարութիւնը. «... մեր ընկերական պայմաններն առ այժմ կը պահանջեն,- գրում է նա,- որ Հայ օրիորդը գիտնայ տուն մը դարձնելու ընդհանուր կանոններն՝ քննական կերպով, հասկնայ թէ որքա՞ն մնեծ կարեւորութիւն ունի կինն իր տընային եւ ընկերային շրջանին մէջ, լաւ ըմբռնէ իր պարտքն եւ քիչ շատ գիտակցութեամբ վարէ տնական գործերը»<sup>33</sup>: Կնոջ բուրժուական ազատութեան, իրաւահաւասարութեան, սոցիալական եւ բարոյահոգեբանական վիճակի բարելաւման գաղափարը, հասարակութեան կրթուած եւ գործուն անդամ դարձնելու նրա լուսաւոր պահանջը դարձաւ «Առտնին տնտեսութիւն» դասա-

<sup>33</sup> Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ, նշ. աշխ., էջ թ:

գրքի եւ ընդհանրապէս նրա բոլոր դասագրքերի եւ աշխատութիւնների կարեւոր ելակէտային սկզբունքներից մէկը: Դասագիրքը կազմուած էր չորս կարեւոր բաժիններից՝ տան բարոյական կազմաւորութիւն, նիւթական կազմաւորութիւն, պիտոյք, առողջապահիկ միջոցներ:

Մամուրեանը համեստօրէն ակնարկում էր, որ իր կազմած դասագիրքը կատարեալ համարուելու յաւակնութիւններ չունի, այն ընդամէնն առաջին նախափորձն է նմանատիպ դասագրքեր ստեղծելու ճանապարհին եւ լիայոյս էր, որ «Եթէ յաջողիմ հետեւողները ունենալ, անտարակոյս հետզիետէ ոչ միայն տնտեսութեան աւելի ընտիր եւ գիտական գործեր, այլեւ մէն մի Հայ հասարակութեան տնային կենաց վիճակին յարմար մասնաւոր տնտեսական գրեան երեւան պիտի գան, որով պիտի օգտի կրթութիւնն եւ պիտի ուղղուին մեր **թերթիկ** տեղեկութիւններն ազգային ընդհանուր կենաց վրայ»<sup>34</sup>:

1861 թուականին Մամուրեանն ընտրուեց Հայոց պատրիարքարանի դիւանագէտ եւ այդ պաշտօնում մնաց հինգ տարի: Այդ տարիներին, ինքնըստինքեան, նա յայտնուել էր սահմանադրական պայքարի թէժ դիրքերում, ամէնուր պաշտպանում էր գաւառահայութեան շահերը, աշխոյժ գործունէութիւն էր ծաւալում Ազգային ժողովներում, գործուն մասնակցութիւն ցուցաբերում նաեւ պոլսահայ թատրոնի ստեղծման աշխատանքներին<sup>35</sup>:

1864-1867 թուականներին Վրոյր գրական ծածկանունով Մամուրեանը «Մեղու», «Կիլիկիա» եւ «Ծաղիկ»<sup>36</sup> հանդէսներում պարբերաբար հրատարակեց իր նամակների շարքը, իսկ 1872 թուականին Զմիւռնիայում այն տպագրուեց «Հայկական նամա-

<sup>34</sup> Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ, նշ. աշխ., էջ Ժ:

<sup>35</sup> Արեւելեան թատրոնը 1862 թուականի մարտի 25-ին ներկայացրեց իր առաջին բեմադրութիւնը՝ Մկրտիչ Պէշիկթաշլեանի դրամաներից: Գլխաւոր դերերից մէկում հանդէս եկաւ Պէշիկթաշլեանը: Ներկայացումը բուռն արձագանք գտաւ թատերասէր հասարակայնութեան լրջանում: Այս մասին տպագրեց ինչպէս Հայ, այսպէս էլ Փրանսիական մամուլը: Այսպէս, Փրանսիական «Բուրժ Օրինեթ»-ը իր խմբագրականներից մէկում մատնանշում է, որ Պէշիկթաշլեանն արժանացել է հանդիսատեսի ջերմ գնահատանքին եւ նրանից ստացել է բազմաթիւ դափնեապակներ:

<sup>36</sup> 1865-1867 թուականներին Մամուրեանը Գրիգոր Զիլինկիրեանի հետ խմբագրել է «Ծաղիկ» տասնօրեայ հանդէսը:

կանի» խորագրով: «Հայկական նամականի»-ն, պատմախոհափիլիսոփայական ժանրի աշխատութիւն է, որտեղ հեղինակը գեղագիտական բարձր վարպետութեամբ ուրուանկարել է իր ժամանակաշրջանի շատ հանրայայտ մարդկանց դիմանկարները: Գրքի գըլ-խաւոր հերոսներն են՝ Վրոյրը, որը Մամուրեանի նախատիպն է եւ Պարոյրը, ով մարմնաւորում է «Մեղու» կիսամսեայ հանդէսի խմբագրապետին՝ Յարութիւն Սուածեանին (գրական կեղծանունը՝ Մեջուխեչա), ում համարձակ եւ անաշառ յօդուածները տարիներ շարունակ անհանգստութեան եւ սարսափի մէջ են պահել կղերապահպանողական հոսանքի պարագլուխներ Յովհաննէս Տէրկարապետեան Տերոյենց Զամուրճեանին, Ղուկաս Պալթազարեանին, Տեյիրմենճեանին եւ այլոց:

Նամականին քննարկուող ժամանակաշրջանի առաջադիմական մտքի երկու խոչոր մտածողների միջեւ խոհափիլիսոփայական բանավէճերի եզակի մի վաւերագրութիւն է, որտեղ բարձրացւում են ազգային հրատապ խնդիրներ, արւում են վերլուծաբանական դատողութիւններ, մշակում կարծիքներ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական տարատեսակ հարցերի շուրջ: Գրքում աշխոյթ քննարկման նիւթ է դարձել Ազգային սահմանադրութեան հարցը, որը չնայած 1860 թուականի մայիսին ընդունել եւ հաստատել էր Հայոց պատրիարքարանը, սակայն օսմանեան կայսրութիւնն այն չէր վաւերացնում. մի հանգամանք, որը բողոքի եւ դժգոհութիւնների հուծկու ալիք բարձրացրեց Կ. Պոլսում, Զէյթունում, Վանում, Մուչում, Զարսանջակում, Զմիւռնիայում եւ այլուր: Երեք տարուայ քաշքըուկից յետոյ սուլթանական Բ. Դուռը 1863 թուականի մարտին՝ Մ. Նալբանդեանի դիպուկ բնութագրութեամբ այն «թլբատուելուց» յետոյ միայն հաստատուեց: Իր անկատարութեամբ եւ բազմաթիւ թերութիւններով հանդերձ Ազգային սահմանադրութիւնն օսմանեան բոնապետութեան պայմաններում առաջադիմական երեւոյթ էր, որի շուրջ ծաւալում էին արեւմտահայութեան սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային շարժումները: Մ. Մամուլեանը 60-ականների մտաւորականութիւնը բաժանում էր երեք խմբի՝ կղերապահպանողական հոսանքի շահերը պաշտպանող, ազատամիտ բուրժուազիայի շահերը պաշտպանող եւ աշխատաւոր ժողովրդի շահերն արտայայտող մտաւորականութիւն, ովքեր մեծ յոյսեր էին կապում սահմանադրութեան հետ եւ նրանից ակնկալում էին իրենց դասի շահերը պաշտ-

պանող ուղղուածութիւն։ Մամուրեանը որպէս լուսաւորիչ ժողովրդավար, դրական վերաբերմունք ունէր սահմանադրութեան նըկատմամբ եւ ինչպէս ազգային բոլոր գործիչները, նա նոյնպէս ապրում էր սահմանադրական անուրջներով։ Սահմանադրութեան վերաբերեալ Մամուրեանն ունէր իր ուրոյն մօտեցումները։ «Եւ իրօֆ ի՞նչ է Սահմանադրութիւնը, բայց եթէ՝ իրաւութիւնը՝ որուն սահմանն է պարտի. պարտի մը՝ որուն սահմանն է իրաւութիւն (ընդգծումները՝ բնագրային)»<sup>37</sup>, այլ կերպ ասած Մամուրեանի պատկերացմամբ սահմանադրութիւնը բնական, կրօնական եւ հասարակական իրաւունքների վրայ հիմնուած քաղաքական օրէնքների արդար իրագործման կառուցուածքային համակարգ է։

19-րդ դարի 60-ական թուականներին Արեւմտեան Հայաստանի մի շարք գաւառներում, ինչպէս նաև Կ. Պոլսում եւ Թուրքիայի հայաշատ կենտրոններում տեղի ունեցան ժողովրդական յուգումներ, որոնք որոշակիութիւն մտցրեցին քաղաքական հոսանքների եւ դրանց յարող մտաւորականների գաղափարական համզմունքներում։ Այդ շարժումները, մեղմ ասած, պառակտեցին սահմանադրականների ձախ թեւը։ Եւ եթէ ժողովրդավար մտաւորականների գործունէութիւնը նկատելիօրէն աշխուժացաւ, ապա ձախ թեւի մի խոնմբ սահմանադրականներ (Գր. Օտեան, Ն. Ռուսինեան, Ա. Վիչէնեան եւ ուրիշներ) զգուշանալով ժողովրդական յուգումների յետագայ խմորումներից, տարանջատուեցին իրենց երբեմնի գաղափարակիցներից (Հ. Սուաճեան, Գր. Զիկին-կիրեան, Կ. Փանոսեան, Ա. Հայկունի, Յ. Պարոնեան եւ ուրիշներ) եւ կտրուկ շրջուեցին դէպի պահպանողական կուսակցութիւնները՝ դաշնակցելով նրանց հետ։

60-ական թուականներին լուրջ փոփոխութիւններ կատարուեցին նաև Մամուրեանի սահմանադրական հայեացքներում։ Նա հաստատականօրէն ընտրեց յեղափոխական ժողովրդավարական ուղին եւ այդ նպատակին ծառայեցնելով իր «Հայկական նամականի»-ն, Համարձակ քննադատութեան ենթարկեց պահպանողական թեւին եւ նրանց կողմն անցած սահմանադրականների տատանողական, երկընտրանքային քաղաքականութիւնը՝ պահանջելով չդաւաճանել իրենց կողմունքներին, չոտնահարել գաւառահայութեան

<sup>37</sup> ՄԱՍԹԵՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ, Երկիր, «Հայաստան» հրատարակչութիւն, Ե., 1966, էջ 530։

քաղաքական իրաւունքները, վերականգնել նրանց ընտրական իրաւունքները, աշակեցն ժողովրդի սոցիալ-տնտեսական եւ հասարակական-քաղաքական բնականոն յարաբերութիւնների զարգացմանը: Թէպէտ սահմանադրութիւնը հեղինակեցին եւ մշակեցին ազատականները (Գր. Օտեան, Ն. Ռուսինեան, Ս. Վիչէնեան եւ ուրիշներ), սակայն նրանք գործնական քայլեր չարեցին այդ շատ կարեւոր պատմական փաստաթուղթը նպատակամէտ օգտագործելու համար: Ահա թէ ինչու անուանի մտաւորականն իր նամակներում, քննադատական խօսքն ուղղելով սահմանադրութեան հեղինակներին, դառն ափսոսանքով գրում է. «Հայ ժողովուրդը Սահմանադրութիւն մը հաստանելու արիութիւնն ունեցաւ, սակայն զայն պաշտպանելու արիութեանը մէջ չարատեւեց: Թէեւ այս արիութիւնն ոչ հուր, ոչ սուր եւ ոչ արիւն կը պահանջէր, այլ միայն փաստարան լեզու մը, ազգին օգուտն իր անձնական շահին վեր դասող առաքինի մարդ մը...»<sup>38</sup>: Մամուրեանի քննադատութիւնը գլխաւորապէս ուղղուած էր նրանց դէմ, ովքեր «կրօնական ու քաղաքական ժողովներում» գրադեցնում էին բարձրաստիճան պաշտօններ, բայց իրենց աթոռները չկորցնելու մտավախութեամբ՝ դարձել էին սուլթանական կառավարութեան հլու կամակատարներ:

**Մ. Մամուրեանի «Հայկական նամականի»-ն բարձր է գնահատել ժամանակի խստապահանջ գրաքննադատական միտքը:**

«Մասիս»-ի խմբագիր Արքիհար Արքիհարեանը գրում է. «Հայկական նամականին... իբր իր ժամանակին լաւագոյն գործերէն մէկը մնացած է եւ պիտի շարունակէ մնալ: Անոնց մանաւանդ հանելի պիտի ըլլայ՝ որ ատենին խնդիրներուն պատմութիւնները կրնան գիտնալ եւ ծածկանուններուն տակ քողարկուած դէմքերը նանչնալ»<sup>39</sup>:

Հրանտ Ասատուրն այս աշխատութեանը տուել է հանճարեղ բնութագրական. «Հայկական նամականիի հեղինակը իր կրակոտ, կնող, հեգնող, երբեմն անգութ ոնով, երիտասարդի բոլոր բափովը, հրապարակագրի բոլոր արիութեամբը, արհամարիելով ամէն նկատում եւ իր զգացւմներէն վարուած միայն՝ իր դատումներուն մէջ:

<sup>38</sup> Նշ. աշխ., աջ 528:

<sup>39</sup> Տե՛ս Բանքեր գրականութեան եւ արուեստի, 1903, Գիրք Ա., էջ 188:

Աներկրայ Հայկական Յամականին (ընդգծումները՝ բնագրային) հրաշակերտն է Մամուրեանին, եւ հայ գրականութեան ալ հրաշակերտներէն մէկը»<sup>40</sup>:

**Իսկ ե. Տէմիրճիպաշեանը գրում է.** «Հայ ազգին ամենաներիուն եւ ամենաքեղուն գրիչն է Պ. Մատթէոս Մամուրեան: Գրեթէ չը կայ նիւթ ոյր վրայ ձեռնհասօրէն չը կարենայ նառել այս յոթնամիտ գրագէտն: Իր գլուխ գործոցն եւ մեր աշխարհիկ գրականութեան հազուագիւտ ընտրագոյն մատեաններէն մին է Հայկական Յամականին, զոր հրատարակած է Վրայ ստանուամր...»<sup>41</sup>:

Գրական բարձր ճաշակի տէր, խոհափիլիսոփայական մտածողութիւն ունեցող այս վաս անհատականութիւնը գրական-թարգմանչական բնագաւառում նոյնպէս ունի զգալի յաջողութիւններ:

**Մ. Մամուրեանը թողել է թարգմանական գրականութեան հարուստ ժառանգութիւն:** Իբրևել թարգմանիչ ունի բազմաթիւ գործեր՝ մեծ մասը բազմահատոր. ուշագրաւ են Գեօթէի «Վերթեր»-ը, կոժէն Սիւիի «Գաղտնիք Բարիզու»-ն, Ալեքսանդր Դիւմայի «Երեք Հրացանակիրները», «Քսան տարի անց»-ը, «Պրաժլոն Դէրկոմ»-ը, Ժիւլ Վերնի «Խորհրդաւոր Կղզին» եւ այլ գործեր. 1871 թուականից սկսած Մամուրեանը հատուածաբար թարգմանում եւ պարբերաբար հրատարակում է Վալտեր Սքոթի «Իվանօէ» վէպը, իսկ մէկ տարի անց այն հրատարակում է առանձին գրքով:

Իբրևել բազմաժանր գրող Մամուրեանը հրատարակել է թատերագրական, պատմագիտական, տնտեսագիտական, ընկերաբանական, մանկավարժական բնոյթի ստեղծագործութիւններ, գրել է կենսագրական յուշագրութիւններ, պատմաժամանակագրային քրոնիկներ, նօթագրութիւններ, ազգային ու քաղաքական տեսութիւններ, գրաքննադատական յօդուածներ եւ այլն: Եւ ամենեւին էլ պատմահական չէ, որ ժամանակակիցները նրան շնորհել են «Հայ գրականութեան պետ» փառահեղ տիտղոսը:

**Մ. Մամուրեանն իր ստեղծագործութիւններով ծանօթ էր նաեւ արեւելահայ հանրութեանը:** Այդ գործում մեծ էր մամուլի դերը: Սակայն ցարական գրաքննադատութիւնը մեծ զգուշաւորութիւն էր հանդէս բերում արեւմտահայ գրողների, արուեստագէտների, հրապարակախօսների, ազգային քաղաքական գործիչ-

<sup>40</sup> Հ. ԱՍՍՏՈՒՐ, Դիմաստուերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 132:

<sup>41</sup> Ե. ՏէՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ (Մշակ), Հատընտիր ընթերցուածք, Կոստանդնուպօլիս, 1880, էջ 22:

ների նկատմամբ եւ ամէն կերպ արգելում էր նրանց գործերի եւ կենսագրականների վերաբերեալ հրապարակումները:

Այսպէս, երբ 1891 թուականին Աբգար Յովհաննիսեանի «Արձագանք»-ի համարներից մէկում պէտք է տպագրուէր «Մատթէոս Մամուրեան» յօդուածը, գրաքննութիւնն այն արգելեց:

Անգնահատելի ծառայութիւններ ունի Մամուրեանը նաեւ դպրոցավարութեան եւ մանկավարժական գործունէութեան ասպարէզում: Աւելի քան 20 տարի, կարճատեւ ընդհատումներով, նա վարել է Մեսրոպեան-Հռիփսիմեան վարժարանի տեսուչի պաշտօնը, միաժամանակ տանելով նաեւ դաստիարակութեան պաշտօնը, միաժամանակ միաժամանակ աշխատավոր աշխատավոր աշխատանքներ: Նա կրթել ու դաստիարակել է հայ պատանիների ու աղջիկների մի քանի սերունդներ:

Իր տեսչութեան տարիներին Մ. Մամուրեանը ճանաչուեց որպէս բացառիկ անձնաւորութիւն, իր անբասիրութեամբ, օրինապահութեամբ, դրամական հաշիւններում մաքրութիւն պահանջող, կարգ ու կանոնով ապրող, սովորողների շահերին հետամուտ եղող, դպրոցական կեանքում կրթական աւանդոյթներին հաւատարիմ ու կրթասէր վառ անհատականնութիւն: Այս ամէնի շնորհիւ էր, որ աշակերտութեան եւ վարժարանի ուսուցչական մարմնի միջեւ երբեք այդպիսի ջերմ ու սրտաբուխ յարաբերութիւններ չէին եղել, ինչպիսիք հաստատուել ու սկսել էին Մ. Մամուրեանի տեսչութեան օրօք:

Իր երկարատեւ տնօրինութեան շրջանում նա երբեք առիթը բաց չի թողել զբաղութելու վարժարանին յուզող ինսդիրներով եւ զգալի ջանքեր է թափել ուսումնագիտական, մանաւանդ հայգիտական առարկաների դասաւանդման մակարդակը բարձրացնելու ուղղութեամբ:

Մ. Մամուրեանը լուրջ քայլեր ձեռնարկեց վարժարանի ուսուցչական մարմինն ուժեղացնելու եւ յատկապէս բնագիտամաթեմատիկական առարկաների անխափան, բարձրորակ դասաւանդումն ապահովելու ուղղութեամբ:

Կեանքի վերջին տարիները Մամուրեանի համար վշտի եւ տիրութեան տարիներ էին: Մի կողմից վաղամեռիկ որդու՝ Վահէի մահը, միւս կողմից ահագնացող հիւծախոր, օրէցօր նրան տանում էին դէպի մահ:

1899 թուականին արեւմտահայ հասարակացնութիւնը մեծ հանդիսութեամբ եւ նուիրումի անմնացորդ երախայրիքով նշեց հայ ժողովրդի արժանաւոր զաւակի գրական, հասարակական, հրապարակախօսական եւ մանկավարժական գործունէութեան 50-ամեայ յոթելեանը:

Հանդիսութեան արարողութիւններին Մամուրեանը՝ իմաստունի օծութիւնը մտքում եւ հոգում ծրարած, իր հարազատ ժողովրդին ներկայացաւ 50 ոսկեայ դափնեպսակներով՝ որպէս առհաւատչեայ անխոնջ գրողի եւ մշակի, յոգնավաստակ գրագիտի եւ գործչի, պատկառելի գիտնականի եւ մտաւորականի: Մ. Մամուրեանն անթերի կատարեց ի վերուստ իրեն չնորհուած առաքելութիւնը՝ «Ան ամբողջ կէս դար գործեց ի սպաս հայութեան. մասնակցելով հայութեանը արթեցնելու եւ լուսաւորելու ագոռող գաղափարական պայքարներուն, մամուլով պաշտպանեց ու տարածեց յառաջադէմ իր կարծիքները, թարգմանութիւններով փորձեց բարձրացնել իր հայրենակիցներուն մըտաւորական մակարդակը, դասագիրքներով եւ մանկավարժական կենդանի գործով մասնակից եղաւ հասնող սերունդներու կրթութեան գործին, գեղարուեստական բնոյթի գործերու մէջ կենդանի արտայայտութիւն տուաւ իր գաղափարներուն: Այսպիսով դարձաւ ան ամբողջական տիպարը Զարթօնքի մտաւորականին»<sup>42</sup>:

Մ. Մամուրեանն իրաւամբ համարւում է 19-րդ դարի երկրորդ կէսի հայ դպրոցի եւ մշակոյթի ամենապայծառ լուսատու աստղերից մէկը: Նա հայ դպրոցի եւ մանկավարժութեան պատմութեան այն եղակի երախտաւորներից է, որ օժտուած էր բազմաժանր գիտական իմացութեամբ, վառ, առինքնող անհատականութեամբ, ներքին զարմանալի ներզգացողութեամբ եւ աստուածատուր այլ պարգեւներով, դրոնց չնորհիւ կարողացաւ 50 երկար ու աներեւայակայելի դժուարութիւններով լեցուն տասնամեակներում անվարան, առանց երկբայելու՝ անտեսելով թէ՛ օսմանեան հայակուլ քաղաքականութեան ստեղծած անյաղթահարելի դժուարութիւնները, եւ թէ՛ ազգային ներքին գաղափարաբանական հակամարտութիւնները, մշտապէս մնալ իր համոզմունքներին հաւատարիմ՝ առաջ մղելով հայ դպրոցի եւ մշակոյթի առաջընթացը կասեցնող խնդիրների ազգանպաստ լուծումների կարգացոյցը:

### ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

<sup>42</sup> ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ (Վրոյր), Երկեր, Անթիւմաս, 1990, էջ 9.

**Mateos Mamuryan and his epoch  
(1830-1901)**

SHOGHIK VOSKANYAN  
(summary)

The literary heritage left by M. Mamuryan is rich and multigenre: pedagogics, publicism, linguistics, historiography, theater science, philology, translation, economy. Within 30 years he was the editor of the «East Press» edition where the numerous articles on pedagogics, economy, political science, historiography, and also the papers having an art orientation were issued. M. Mamuryan worked in other periodicals as well, «Tsaghik» (The Flower), «Meghu» (The Bee), «Kilikia», «Krunk Hayots Ashkharhin» (The Stork of the Armenian country), etc. The numerous articles have published under the Vruyr, Shakhnur, Aprsam, etc. pseudonyms.

M. Mamuryan had the ideological connections with Michael Nalbandyan, Hovsep Shishmanyan (Tserents), Harutyun Svachyan, Hakop Paronyan, Grigor Chilimkaryan, Armenak Hajkani, and others which on advantage appreciated his scientific publicistic activity and a rich literary heritage.

Having philological, polyglot basic knowledge, superb owning French and English languages, M. Mamuryan within long-term indefatigable work became known as the translator of scientific and fiction literature, has published numerous articles and research works, more than 50 years conducted pedagogical activity at schools of Constantinople and Izmir and has become famous as the public cultural figure. He accumulated such features enriching an original image of the teacher and which were inherent only in pupils of Murad Raphaelyan seminary and by his mission of selfless service to people aspired to take a strong place in a Galaxy of Mekhitarian Brotherhood elders.

M. Mamuryan is one of the most outstanding figures of the Western Armenian scientific-theoretical idea's history. The significant place in his scientific heritage belongs to the theoretical analysis of basic issues of pedagogics. Last decades of the century the Western Armenian pedagogical idea experienced a new stage of its development – having a task of scientific bases creation on the training and education theory.

M. Mamuryan, being the intellectual person, full of advanced light ideas, the teacher, the head of school, and the carrier of new pedagogics idea, is rightfully in the forefront of the carriers of the new school creation ideas.

In 1881 the «Ankliakan namakani» (the English collection of letters) was published. It was the interesting work of a publicistic genre where the heroes were communicated by means of letters. M. Mamuryan with the special logic peculiar to the multigenre writer, and with the realized desire to inform allegorically its ideas to the reader, has chosen this form of work.

With the help of such letters the author gives purposeful comments, on the one hand lifts the essential problems exciting the Western Armenians – school, education, national-liberation movement, etc., and on the other hand with skill of the artist and the pragmatist makes the sketches of a real picture of social, economic, public, political life of the Western Armenians, shows catastrophic consequences of expatriation of Armenian people, represents the attempts to explain the sociopolitical reasons of resettlement and exile,

pursuing the sacred purpose – to stop the exile which threatened to transform the country of Armenia into «historical shadow».

M. Mamuryan has left a rich heritage of the translational literature. As the translator he has numerous translation works, mostly multivolume: the "Werther" by Goethe, the «Three musketeers», the «Twenty years later» by Alexander Dumas, the «Mysterious Island» by Jules Vern, etc. Since 1871 M. Mamuryan fragmentary translates and periodically publishes the "Ajvengo" by Walter Scott which afterwards was published as the separate book.

As multigenre writer M. Mamuryan has published the articles of theater science, historiographic, pedagogical character, has written memoirs, historical-time chronicles, national and political theories, literary-critiques, etc. So, it is not so casual, that contemporaries have appropriated to him a brilliant title «The Head of the Armenian Literature».

//